

ՀԱՅՅԵՐԸ ՇԻՆՏԲԵՐԳԵՐԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՈՒԹՅ

Գ. Վ. ԱՔԿԱՐՅԱՆ

Յոգեֆ Մարկվարտը Ստրաբոնի մի տեղեկության առիթով գրում է. «Սույն փաստի երկար ժամանակ անհայտ մնալը բացահայտվում է այն հայտնի իրողութեամբ, որ ամենահասարակը և ամենամոտիկը հաճախ չի նկատվում և հայտնաբերվում է միայն անուղղակի ճանապարհով»¹: Այդպիսի ճանապարհով է հայտնաբերվել նաև Շիլտբերգերի ուղեգրության՝ որպես հայերենի նմուշներ պարունակող առաջին տպագիր գիրք լինելու փաստը: 1394—1427 թթ. Արևելքում գտնված գերմանացի ճանապարհորդ Յոգեֆ Շիլտբերգերի ուղեգրությունը հայագիտությանը հայտնի էր դեռևս անցյալ դարում, երբ նշանավոր հայագետ Կարլ Ֆրիդրիխ Նոյմանը 1859 թ. Մյունխենում հրատարակեց Շիլտբերգերի «Ճանապարհորդություններ Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում» աշխատությունը: Բայց որ դա տպագիր հայերենի նմուշներ պարունակող առաջին գիրքն է, որում լատիներեն տառերով տպագրվել է հայերեն «Հայր մերը» Հակոբ Մեղապարտի տպագրությունից շուրջ 20 տարի առաջ, այդ մասին խոսք է բացվում առաջին անգամ մեր օրերում²:

Եվրոպացիներին հայերենի մասին գաղափար տալու համար Շիլտբերգերն ընտրել է մի բնագիր, որից ավելի նշանավորը պատկերացնել դժվար է: Աստվածաշնչային աղոթքը դարեր շարունակ ուղեկցում է քրիստոնյաների կյանքին: 1257 և 1285 թթ. Լեհաստանում ընդունվեց օրենք «Հայր մերը» որպես ուսուցման աստղձ օգտագործելու համար: Աղոթքն օրնիրուն հնչում է կենցաղում, և Շիլտբերգերը հաճախ է լսել այն հայերեն: Հայերը նրան հայերեն սովորեցնելիս բնականաբար պետք է դիմեին աղոթքին, որը գոյություն ուներ նաև գերմաներեն, որի համադրությամբ հեշտանալու էր լեզվի ուսուցումը: Շիլտբերգերը առաջին հայերենագետն է միջնադարյան Գերմանիայում: Նա իր գրքում խոսում է մի շարք ժողովուրդների մասին, բայց անհրաժեշտ է համարել արտագրել և գերմանացիներին ներկայացնել միայն հայերեն աղոթքը և նրա թուրքերեն թարգմանությունը հայերի ձեռքով: Ճանապարհորդը բավարացի էր: Իսկ Բավարիան հայամետ երկիր էր, որտեղ հայերը բնակություն էին հաստատել Շիլտբերգերից հարյուրավոր տարիներ առաջ: Բավարական էպոսում հայ նախմետը հանդես է գալիս Կառլոս Մեծ կայսեր ռազմական խորհրդատուի դերում³:

Շիլտբերգերի ուղեգրության զգալի մասը վերաբերում է հայերին, հետևաբար հայերի նկատմամբ ցուցաբերված հետաքրքրության արդյունք պետք է համարել այն, որ գիրքը հրատարակվել է Գուտենբերգի տպագրության ա-

¹ Յ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը: Գերմաներեն անտիպ բնագիրը թարգմանեց, ծանոթագրեց և պատրաստեց հրատարակության Գ. Վ. Արզարյանը (ՊՐՀ, 1961, № 2, էջ 217):

² Կ. Արզարյան, Հայաստան առաջին տպագրությունը կատարվել է 1486 թ. («Հայաստան» օրաթերթ, 1991, թիվ 123):

³ Կ. Արզարյան, Բարձրաբերձ Հայաստանից եկած ջեզը («Գրական թերթ», 1992, թիվ 20):

առջին տասնամյակներում: Կարծիք կա, որ առաջին հրատարակութիւնը կատարվել է Ուլմի տպարանում 1473 թ.: Տպագրութեան թվական է համարվել թյուրիմացաբար նաև 1466-ը: Ավելի հաստատ է 1475 թ. Աուգսբուրգի հրատարակութիւնը, որի ընդարձակ խորագիրը անհրաժեշտ ենք համարում նույնութեամբ բերել.

Eine wunderbarliche und kurzweilige Historie, wie Schiltberger, einer aus der Stadt München in Bayern, von den Turken gefangen in die Heidenschaft geführet und wieder ist heim kommen. Item, was sich für Kriege und wunderbarliche Taten, diweil er in der Heidenschaft gewesen, zugetragen, ganz kurzweilig zu lesen... Augsburg, 1475.

Թարգմանենք.

«Զարմանալի և հակիրճ պատմութիւն այն մասին, թե ինչպես Շիլտբերգերը՝ Բավարիայի Մյունխեն քաղաքի բնակիչներից մեկը, թուրքերի կողմից գերվելով տարվել է հեթանոսների մեջ և վերադարձել է տուն: Թե ինչ կռիվներ և զարմանալի գործեր են տեղի ունեցել, երբ նա հեթանոսների մեջ է եղել, մատուցվում է շատ համառոտ, կարդալու համար... Աուգսբուրգ, 1475»:

Միջնադարյան գերմանացիների ամենասիրած գրքերից մեկը եղել է Շիլտբերգերի ուղեգրութիւնը, որը 1475—1500 թթ. ընթացքում հրատարակվել է 5 անգամ: Հինգ տարին մեկ վերահրատարակվել է: Մեզ հայտնի տպագրութիւնների քանակը 16-րդ դարում 11 է: Հետագա դարերում նույնպես բազմիցս տպագրվել է: Գիտական հրատարակութիւններն սկսվում են 1813-ից: Մեր դարում հրատարակվել է 1917, 1947, 1968 թթ.: Թարգմանութիւններն են՝ ռուսերեն (1866), անգլերեն (1879), բուլղարերեն (1971): Հայերին վերաբերող գլուխները, այն էլ՝ ոչ լիակատար, թարգմանել է նկարիչ Վարդգես Սուրենյանցը, որը 1879—1885 թթ. ուսանել է Շիլտբերգերի հայրենի Մյունխենում, Գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետութեան ու գեղանկարչության բաժիններում: Նա փաստորեն ոչ թե թարգմանել, այլ վերապատմել է իր ընտրած մասերը: Նրա թարգմանածը լույս է տեսել 1890 թ. Մոսկվայում հրատարակված «Հանդես գրականական և պատմական» պարբերականի 9 գրքի 148—165 էջերում: Այս հրատարակութեան մասին լիմանալով՝ Ա. Ֆոկոլոյանը 1959 թ. «Բազմավեպի» 11—12-րդ միացյալ համարում (էջ 240—247) հրապարակեց դարձյալ հայերին վերաբերող գլուխների թարգմանութիւնը, որը կատարված է ոչ թե գերմաներեն բնագրից, այլ անգլերենից:

Եվրոպացի միջնադարյան ճանապարհորդներից առաջինների շարքում պետք է որ հայագիտութիւնը դասեր Շիլտբերգերին, սակայն նրան անդրադարձել են հատուկենտ հողվածներում, թուուցիկ կերպով: Հայկական հանրագիտարանում նրա անունը բացակայում է: Ինչպես ասվեց, մինչև վերջերս հայտնի չէր, որ գուտենբերգյան տպագրութեան առաջին իսկ տարիներին տրպագրված նրա ուղեգրութիւնն առաջին գիրքն է, որում հայերենն արժանացել է տպագրութեան: Կարլ Ֆրիդրիխ Նոյմանի կողմից որպես «Մյունխենցի Մարկո Պոլո» հռչակված ճանապարհորդը Հայաստանից դուրս ավելի է ուսումնասիրվել: Նույնիսկ Բաքուն, որին վերաբերող ոչինչ չկա Շիլտբերգերի գրքում, 1984 թ. կրճատումներով հրատարակել է գերմանացու երկը: Պարույր Մուրադյանը ռուսերեն «Կոմունիստ» օրաթերթում (1988, թիվ 149) արդեն ցույց է տվել, որ Բաքվի հրատարակութիւնում կրճատված է Ղարաբաղին վերաբերող այն մասը, որում Շիլտբերգերը հայտնում է, որ այդ երկիրը բնակեցված է հայերով:

Մի երկու խոսքով բնութագրենք ադրբեջանցի գիտնականների փպագրած այդ աղբյուրը: Գրքում ամենամեծ տեղը հատկացված է հայերին, որոնց նը-

վիրված են մի շարք գլուխներ: Սրանք Բաքուն զգալիորեն պակասեցրել է, խախտելով բոլոր 30 հրատարակութունների և թարգմանութունների ավանդույթը: Սա դեռ բավական չէ: Հրատարակիչները սեփական մեկնաբանութուններով նենգափոխել են հեղինակի և ուսուցիչի թարգմանչի վաստակը: Այս թարգմանութունը պատկանում է պրոֆեսոր Ֆ. Կ. Բրունի գրչին: Այն հրատարակվել է 1867 թ. Օդեսայում և հագեցված է բարձրարժեք ծանոթագրութուններով, որոնք փայլում են Հայաստանի և հայերի մասին գիտելիքներով: Բաքուն խնամքով թաքցնում է ուղեգրության հայագիտական կարեւորութունը: Նույնիսկ չի հայտնվում, որ հայերի մասին տեղեկութուններ կան գրքում: Տեղանուններն աղբյուրանկանացվում են. «Կարնի (Գառնի)» — միջնադարյան ամրոց, որի ավերակները գտնվում են Երևանի հարավ-արևմուտքում, Գառնիչյա գետի ափին»: Մի կողմ թողնելով, որ Գառնին գտնվում է ոչ թե Գառնիչյա, այլ Ազատ գետի ափին, նշենք բաքվեցի մեկնաբանների անգրագիտութունը: Շիլտբերգերը հիշատակում է ոչ թե Գառնին, այլ Քրոնան, որը գտնվում է Նախիջևան, Մարաղա, Խլաթ միջավայրում. «Կա մի քաղաք, Նախիջևան անվամբ, այն լեռան ստորոտում, որի վրա իջել է Նոյի տապանը... Այնուհետև գալիս է մի երկիր, երեք քաղաքով՝ Մարաղա, Խլաթ և Կարնի» (գլուխ 33): Ըստ որում՝ Գառնին ոչ թե միջնադարյան, այլ անտիկ շրջանի ամրոց է, որը հիշատակում են դեռևս հռոմեացի մատենագիրները:

Բաքվեցիների անտեղյակութունն ու միտումնավորութունն ավելի ցայտուն է երևում մյուս բոլոր հրատարակիչների մակարդակի համեմատությամբ: Մեր սույն հոդվածում մեջբերումները կատարելու ենք ըստ գերմաներեն բրնագրի 1859 թ. Մյունխենի հրատարակության, որի հեղինակն է, ինչպես ասվեց, Նոյմանը: Այս գիտնականը հայերենին տիրապետում էր անթերի: 1830-ական թվականներին Մյունխենի համալսարանում դասավանդում էր հայերեն և շինարեն: Թարգմանել է Եղիշեի, Ներսես Լամբրոնացու, Վահրամ Բարունու և այլոց երկերը: Հրապարակել է հայ գրականության պատմությանը նվիրված մի մենագրություն: Առանձին հոդվածներով հանդես է եկել հայ գրականութունը Եվրոպային ներկայացնելով: Անդրադարձել է հայ ժողովրդի պատմությանը: Նրա բազմաթիվանդակ պատրաստութունների մասին են վերկայում նաև տարբեր կրոնների ու երկրների պատմությանը նվիրված մենագրութունները:

Նոյմանն իր հրատարակության առաջաբանում մի ամբողջ գլուխ նվիրել է հայերին. «Շիլտբերգերը և հայերն ու հույները»: Այս գլխում կարդում ենք. «Շիլտբերգերն ո՛ւր որ էլ գնացել է, հանդիպել է հայերի, որոնք նրան բարեկամաբար են ընդունել ու սիրալիր վարվել նրա հետ... Բավարացիի յուրացրել է հայոց լեզուն, որով նա ոչ միայն պարզապես խոսել է, այլև գրել... Մյունխենը կարող է նրան մատնացույց անել որպես առաջին գերմանացի հայագետի»: Բաքվեցիների թաքցրած Պարաբաղը գերմանացի գիտնականին հայտնի է եղել իր բնական վիճակում. «Այս վայրը հին ժամանակներում հայերը կոչում էին Արցախ... Ինձիճյանը գտնում է, որ Պարաբաղն այն միևնույն քաղաքն է, որն Ագաթանգեղոսի և այլ հայ մատենագիրների երկերում կոչվում է Խաղխաղ»:

Ավելորդ չէր լինի նշել բաքվեցիների համեմատությամբ գերմանացի գիտնականի գիտական բարեխղճութունը: Բաքվեցիները Երզնկան կոչում են Երզինջան և հայտնում են, որ այն գտնվում է Արևելյան Անատոլիայում: Այս թուրքական տեղեկության փոխարեն գերմանական գիտության ներկայացուցիչը հայտնում է, որ Երզնկան «շատ հին ու համբավվոր քաղաք է, որը Շիլտբերգերը հաճախ է հիշում... Հեթանոս հայերի օրոք քաղաքը մեծարվում էր Անահիտ աստվածուհու պաշտամունքի շնորհիվ... Նախքան քրիստոնեա-

կան թվականը առաջին դարում Տիգրան Բ թագավորը քաղաքը զարդարեց տաճարների մեծ բազմությամբ: Քրիստոնեությունն ընդունելուց հետո էլ Երզրնկան գերազանց մակարդակ ունեն հայկական քաղաքների շարքում»: :

Նոյամանը Շիլտբերգերի երկը հրատարակել է գրեթե հեղինակին ժամանակակից մի ձեռագրի հիման վրա, որն այժմ պահվում է Հայդելբերգում: Նրան հայտնի են եղել նաև մյուս երեք ձեռագրերը, որոնցից մեկի՝ Նյուրնբերգի ձեռագրի մասին նա գրում է. «Ինչպես որ իմ յննացի բարեկամներից մեկն է շատ տարիներ առաջ ինձ հայտնել, Շիլտբերգերի ձեռագիրը Պենցելի թողոնների մեջ չի գտնվել»: Կորած համարված սույն ձեռագիրը հետագայում գտնվեց և հրատարակվեց 1885 թ. Թյուրինգենում: Այս թղթյա ձեռագիրը բաղկացած է 60 թերթից: Ձեռագրի սկզբում գետեղված է Մարկո Պոլոյի 1481 թ. տպագրությունը: Մյուս ձեռագրերից մեկը մեզ արգեն ծանոթ Հայդելբերգի ձեռագիրն է, որը բաղկացած է 134 թերթից: Երրորդ ձեռագիրը Դոնաուսշինգենի 96 թերթանոց ձեռագիրն է: Իսկ չորրորդը միայն 22 թերթանոց մի հատված է: Այս բոլոր ձեռագրերի համեմատությամբ վալինտին Լանգմանտելը 1885 թ. Նյուրնբերգում տպագրեց Շիլտբերգերի ուղեգրությունը:

Չորս ձեռագրերից միայն երեքն ունեն հայերեն «Հայր մերը»: Նյուրնբերգյան ձեռագիրը չունի: Աղոթքը գտնվում է Լանգմանտելի հրատարակության 147-րդ էջում: Փակագծերում նշված են ձեռագրական տարբերեցվածքները: Թե ինչպես է հայերենը հնչել օտարի բերանում, երևում է Շիլտբերգերի արտագրությունից, որը բերում ենք ստորև.

DAS ARMENISCH (ERMENISCH H) PATER NOSTER

Har myer ur erqink es surp eytza annun chu; ka archawun chu; jorgetzi kam chu (thu DH) [worpes] hyerginckch yer ergory; [es] hatz meyr anhabas tur myes eisor; yep theug (cheugh D) meys perdanatz hentz myengckch (myenglich H) theugunch meyrochch perdapanatz; yep my theug myes y phurtzuthiun (phwerczuchin D. phwetzuchin H); haba prige (bryge D) myes y tzscharen (czsaharen D, tzscheren H). Amen.

Սույն բնագիրը տպագրելուց հետո հրատարակիչը հայտնում է, որ ձեռագրերում պահպանված տեքստը կրում է բարբառային տարրերի հետքեր և շեղվում է հայոց եկեղեցում ընդունված պաշտոնական բնագրից: Այնուհետև նա տպագրել է այդ պաշտոնականը: Լատինական տառադարձությունը հայատառ բնագրից կատարել է Լեոն Մուլթաֆյանը, որի վաստակը երախտագիտությամբ նշել է Լանգմանտելը:

«Հայր մերը» բովանդակ Աստվածաշնչում առ Աստված ուղղված միակ աղոթքն է, որ Քրիստոսն արտասանել է իր բերանով: Եվ պատահական չէ, որ հայերեն տեքստը Եվրոպայում հրատարակել են նաև Շիլտբերգերից անկախ, հետագայում: Հրատարակվածներից Շիլտբերգերի գրի առածն ավելի մոտենում է արևելահայերենին: Աղոթքի ստույգ բնագիրն է. «Հայր մեր, որ յերկինս»: 1539-ին Իտալիայի Բավիա քաղաքում լույս տեսած Ամբրոսիոս Թեզեոսի «Ներածություն քաղցեբերեն, ասորերեն, հայերեն և տասը ուրիշ լեզուների» խորագիրը կրող աշխատության 185-րդ էջում տպագրված է. «Հայր մեր, որ յերկինս դես»: Նույնը գտնում ենք նաև Ոսկան Երևանցու 1666 թ. Ամստերդամում տպագրված Աստվածաշնչում: 1807 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված Հովհաննես Հաննա Երուսաղեմացու «Գիրք պատմութեան սրբոյ և մեծի քաղաքիս և սրբոց տնօրինականաց տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» մենագրությունում փորձ է արվել սրբագրել հետևյալ ձևով. «Հայր մեր, որ յերկինսդ էս» (էջ 272): Խնդրո առարկա տարբերվածքը

գտնում ենք նաև 1596 թ. Փարիզում տպագրված Պետրո Վիկտորե Գաիետանո Պարմայի տպագրած աղոթքում, որի առիթով կարծիք է հայտնվել, թե եվրոպացի հեղինակը սխալվել է: Իրականությունն այն է, որ հայկական ձեռագրերում գտնում ենք եվրոպացիներին վերագրված սխալը: Մաշտոցի անվան մատենադարանի № 947 ձեռագրի 79ա էջում գրված է. «Հայր մեր, որ յերկինս դես»:

Յոհաննես Շիլտբերգերի երկը բաղկացած է 67 գլուխներից, որոնք ավարտվում են «Հայր մեր» աղոթքի հայերեն և թուրքերեն լատինատառ տեքստերով:

Ուղեգրության առաջաբանում Շիլտբերգերը հայտնում է ինքնակենսագրական որոշ տեղեկություններ: «Այն ժամանակ, երբ հունգարների թագավոր Սիգիզմունդը պատրաստվում էր արշավանքի ընդդեմ հեթանոսների (թուրքերի — Գ. Ա.), ես Յոհաննես Շիլտբերգերս, դուրս եկա հայրենիքից, այսինքն՝ բավարական քաղաք Մյունխենից, պարոն Լայնհարտ Լիխարտինգերի հետ միասին: Դա տեղի ունեցավ Քրիստոսի ծննդյան հազար երեքհարյուր ինսուևըսերորդ տարում: Հեթանոսությունից (գերությունից — Գ. Ա.) վերադարձա հազար շորսհարյուր քսանյոթերորդ տարում»: Այսպիսով Շիլտբերգերն ավելի քան 30 տարի գտնվել է գերության մեջ արևելքում:

Գրի է ընկնում քսան տարին դեռ չբոլորած: Երբ թուրքերը հաղթում են Սիգիզմունդի բանակին, պարտվողներից ով կարողանում է, փախչում նստում է նավ և ազատվում բարբարոսներից: Շիլտբերգերն էլ է կամենում փախչել, բայց չի հաջողվում: Նավ նստածները կտրում են մոտեցողների ձեռքերը, որպեսզի նրանք նավ չբարձրանան: Թուրքերի թագավոր Բայազիտի հրամանով գերիներին գլխատում են: «Երբ հերթն ինձ հասավ, թագավորի տղան ինձ նկատեց և հրամայեց, որ ինձ կյանքից չզրկեն... որովհետև չէին սպանում նրանց, ում քսան տարին դեռ չէր լրացել»: Որոշ ժամանակ անց նա փախչում է գերությունից և տասնյակ տարիներ դեգերում ամենատարբեր վայրերում: Ամենից շատ բնակվում է հայերի մոտ և մտերմանում նրանց հետ:

Իր գլխի եկածը և առհասարակ պատմությունը նա համեմտում է հետաքրքիր, երբեմն առասպելական դրվագներով: Օրինակ պատմում է օձերի կովի մասին: Սրանք մարդկանց շեն վնասում: Բաժանվել են երկու բանակի և ոչնչացնում են միմյանց: Վերջում մնում են 8000 սպանված օձ, որոնց լցնում են մի մեծ փոսի մեջ և հողով ծածկում: Օձերից ավելի կատաղի ու թունավոր է եղել Քամերլանը (Լենկ Քեմուրը): Սպահանում նա կտրել է տալիս 12000 զինվորներից յուրաքանչյուրի մեկական մատը, սպանում է 14 տարեկանից բարձր բոլոր սպահանցիներին: Նրանց գլուխները հավաքում են քաղաքի կենտրոնում և սարքում են գանգերի աշտարակ: Երևիսաներին հանում են քաղաքից և բաց դաշտում, մայրերի աչքի առջև գցում են ձիերի ոտների տակ:

Քսանյոթերորդ գլխում Շիլտբերգերը պատմում է, թե ինչպես մի հեթանոս (թաթար) կին, որն ունեցել է 4000 նաժիշտներ, սպանված ամուսնու վրեժը լուծելու նպատակով հրամայել է սպանողին՝ ծնկի գալ, ապա մերկացրել է սուրբ և մեկ հարվածով կտրել է նրա գլուխը: Սա կատարվել է Շիլտբերգերի աչքի առջև, «ես ներկա էի և ինքս եմ տեսել դա»:

Նրա հիշատակած որոշ դեպքերի նկարագրությունները քաղված են անցյալի ճանապարհորդներից (Մարկո Պոլո, Կլավիխո, Օդորիկ, Լուդոլֆ Ֆոն Զյուտհայմ, Մանտեվիլ):

Հայերի մասին նա խոսում է ոչ միայն հատկապես նրանց նվիրված գրություններում, այլև այլուր: Օրինակ, 33-րդ գլխում հիշատակում է Նախդոնր

(Նախիջևանը), որը «գտնվում է այն լեռան մոտ, որի վրա իջել է տապանը, և որում եղել է Նոյը... կա նաև մեկ այլ լեռան վրա գտնվող քաղաք, որը կոչվում է Մեյա (Մակու): Այստեղ կա մի եպիսկոպոսություն, որ դավանում է Հռոմին: Քահանաները քարոզչական օրգանից են և խոսում են հայերեն... Նույն երկրում ու թագավորությունում, այն ժամանակաշրջանում, երբ ես գտնվում էի հեթանոսների մեջ, կար մի մարդ, որը 350 տարեկան էր... եղունգները՝ մեկ դույմա երկարություն: Ունքերը աչքերի վրայից հասնում էին այտերին: Նրա ատամները երկու անգամ էին դուրս եկել, փափուկ էին և ոչ կարծր, ինչպես որ ատամներն են լինում: Նրանցով նա չէր կարողանում կծել և ուտել: Նրան կերակրում էին: Նրա մազերը ականջներից իջնում, հասնում էին կզակին: Մորուքը հասնում էր ծնկներին: Գլխին մազեր չունեի և չէր կարողանում խոսել: Բայց նա հասկացնում էր նշաններով: Նա քայլել չէր կարողանում, և նրան կրում էին: Հեթանոսները այդ մարդուն համարում էին սուրբ մարդ... Հազար տարվա մեջ ոչ ոք այսքան երկար չէր ապրել» (Նման մի առասպել հաղորդում է նաև Ալ-Մասուդին):

36-րդ գլխում Շիլտբերգերը հաղորդում է կարևոր տեղեկություններ Ղըրիմի Կաֆա քաղաքի մասին: Այստեղ բնակվում են իտալացիներ, հույներ, հայեր, ասորիներ: Բուրն էլ քրիստոնյաներ են: 41-րդ գլխի խորագիրն է. «Դրախտի գետերի և 1111 աղբյուրների մասին»: Յուրովի վերապատմվում է հանրահայտ ավանդությունն այն մասին, որ դրախտի կենտրոնում բխում է մի աղբյուր, որից սկիզբ են առնում չորս գետեր. «... երրորդ գետը կոչվում է Տիգրիս և հոսում է Ասիայի և Մեծ Հայքի միջով: Զորրորդը կոչվում է Եփրատես, որը հոսում է Պարսկաստանով և Փոքր Հայքով: Զորս գետերից երեքը տեսել եմ: Մեկը կոչվում է Նեղոս, մյուսը՝ Տիգրիս, երրորդը՝ Եփրատես: Եվ այն երկրներում, որոնցով հոսում են գետերը, ես գտնվել եմ շատ տարիներ»: Այս կարգի տեղեկություններից կարելի է պատկերացնել, թե ինչպիսի հետաքրքրությամբ են ժամանակակիցները կարդացել դրախտի երեք գետերի ականատես Շիլտբերգերին:

46-րդ գլխում Շիլտբերգերը շարադրում է միջնադարում շատ տարածված մի ավանդություն Մահմեդի ծննդյան և գործունեության մասին: Ամենայն հավանականությամբ նա ավանդությունը լսել է հայկական միջավայրում: Դա երևում է ավանդության որոշ մանրամասնություններից: Այսպես, օրինակ, Եգիպտոսի ճանապարհին ընկած գյուղերից մեկում հայ քահանան գուշակում է, որ առևտրականների հետ ճանապարհորդող մի պատանի դառնալու է ապագա Մահմեդը: Դիմում է նրան. «Դու պետք է դառնաս մեծ ուսուցիչ և հիմնելու ես մի հատուկ հավատ հեթանոսների մեջ և քո գործությամբ խիստ ճնշելու ես քրիստոնյաներին: Եվ քո ցեղը մեծ ուժ է ստանալու: Բայց ես խնդրում եմ քեզ, որ դու իմ հայ ցեղին խաղաղ պահես: Նա (պատանին— Գ. Ա.) խոստացավ այդպես վարվել և մյուս վաճառականների հետ միասին գնաց Բաբելոն»:

50-րդ գլխի խորագիրն է. «Մահմեդն ինչու է արգելել հեթանոսներին գինի խմել»: Արգելքի պատճառները հեղինակը լսել է հեթանոսներից (թուրքերից), որոնք նրան ասել են, որ միակ բացառությունը Մահմեդը վերապահել է հայերին, որոնց խոսք է տվել լավ նայել: Այնուհետև Շիլտբերգերը հայտնում է, որ գինու գործածության համար հայերը մահմեդականներին վճարել են ամենամսյա դրամական հարկ: Ֆ. Կ. Բրունն իր ուսերին թարգմանություն 99-րդ էջում հայտնում է, որ Շիլտբերգերի լսածը հաստատում է նաև հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին:

Հաջորդ գլխում հաղորդվում է իսմայելական «թեյ» («Դախ») կոչվող համայնքի օրենքների մասին: «Այս է նրանց օրենքը... ով որ կամենում է

նրանց համայնքում լինել, նա պետք է երդվի, որ որտեղ որ մի քրիստոնյայի հանդիպի, նրան ո՛չ կենդանի թողնի, ո՛չ էլ գերի վերցնի: Իսկ եթե դա նրան այնտեղ (կովի դաշտում— Գ. Ա.) չհաջողվի, ապա պետք է գնի մեկին (մի քրիստոնյայի— Գ. Ա.) և սպանի»:

52-րդ գլխում խոսվում է քրիստոնյաներին մահմեդականացնելու մասին: Հայտնվում է, որ քրիստոնյաները պարտավոր են կապույտ գլխարկ կրել, իսկ հրեաները՝ դեղին:

Բացի նշված գլուխներից, հատկապես հայերին են նվիրված ուղեգրության վեց գլուխ՝ 13, 62, 63, 64, 65, 66: Սրանցից առաջինի խորագիրն է. «Վայազիտը (սուլթան Բայազետ) գրավում է Փոքր Հայքը»: Պատմվում է Երզրնկայի, Անկյուրայի և եվրոպական աղբյուրներում Փոքր Հայք կոչվող Կիլիկիայում գտնվող այլ վայրերի գրավման մասին: Բայազետի թալանած ոսկին և արծաթը տեղափոխելու համար պահանջվել է հազար ուղտ: Սուլթանը վերցնում է շատ գերիներ, որոնց թվում՝ նաև Շիրաքերգերին:

Հաջորդ՝ 62-րդ գլխի խորագիրն է «Արմենիայի մասին»: Կ. Ֆ. Նոյմանը «Արմենիա» տեղանվան վրա գրել է ծանոթագրության նշան և բացատրել. «Հայաստան, այսինքն հայերի երկիր»: Կ. Կոստանյանցը սխալմամբ կարծելով, թե այս ստուգաբանությունը Շիրաքերգերինն է, գրում է. «Շատ տեղեր նա իհարկե մեղանշում է տգիտություն: Այսպես օրինակ Հայաստան անունը նա մեկնել է իբրև նախնայաց աշխարհ, երևի հայ և հայր բառերն իրար հետ շփոթելով» (Հայագիտությունը Արևմտյան Եվրոպայում, Թիֆլիս, 1910, էջ ԻԳ): Շիրաքերգերը գրում է. «Արմենիայում նույնպես ես շատ եմ եղել: Երբ Թամեուանը մեռավ, ես եկա նրա որդու մոտ, որը Հայաստանում ուներ երկու թագավորություն: Նրա անունն էր Շարոխ (Շահ-տոխ— Գ. Ա.), որը հաճույքով էր նստում Հայաստանում, քանզի այստեղ կա շատ գեղեցիկ մի վայր... Այս վայրը հեթանոսների լեզվով կոչվում է Կարավազ (Ղարաբաղ— Գ. Ա.): Նրանք (հեթանոսները— Գ. Ա.) գրավել են ամբողջ վայրը, թեև այն գտնվում է Հայաստանում: Գյուղերում նույնպես հայեր են, բայց նրանք պարտավոր են հեթանոսներին հարկ վճարել: Հայերի մոտ ես ամենուրեք բնակատեղի ունեի, որովհետև նրանք գերմանացիներին շատ բարեկամ են: Եվ քանի որ ես գերմանացի էի, նրանք ինձ շատ սիրով էին ընդունում: Եվ նրանք ինձ սովորեցրին նաև իրենց Հայր մերը և իրենց լեզուն, և նրանք գերմանացիներին կոչում են նիմից: Արմենիան ունի երեք թագավորություն: Մեկը կոչվում է Թիֆլիս, մյուսը՝ Սյոս (Սիս— Գ. Ա.), երրորդը՝ Երզնկան (Երզրնկա— Գ. Ա.): ... Նրանք երկար ժամանակ ունեին նաև Բաբելոնը, բայց այժմ չունեն...»:

63-րդ գլխի խորագիրն է. «Հայերի հավատի մասին»: Գերմանացի ճանապարհորդը, հայերենին տիրապետելով, հայկական եկեղեցում հաճախ լսել է քարոզներ. «Ես նրանց քահանաներից հաճախ եկեղեցիներում քարոզներ եմ լսել»: Նա պատմում է Գրիգոր Լուսավորչի և 40 ցուլի ուժ ունեցող Տրդատ թագավորի (որը Բեթղեհմում եկեղեցի է կառուցել) մասին, թե ինչպես Տրդատը Լուսավորչին գցում է խոր Վիրապը, որտեղ վիշապները, օձերն ու այլ շար սողուններ պետք է ոչնչացնեին բանտարկյալին: Վերջինս 12 տարի մընում է այնտեղ: «Այդ ժամանակ Արմենիա եկան սուրբ կույսերը... Սրանց մեջ կար մեկը, որը կոչվում էր Սուսաննա (Հոսիսիմե— Գ. Ա.) և շատ գեղեցիկ էր»: Տրդատն ինչքան էլ որ ուժեղ էր, չի կարողանում տիրանալ Սուսաննային, որովհետև վերջինիս հովանավորում էր Աստված: Կույսը կշտամբում է հայոց թագավորին. «Օ՛ շար խոզ»: Եվ Տրդատը խոզ է դառնում: Երկրի իշխանավորները Գրիգոր Լուսավորչին հանում են խոր Վիրապից և նա բուժում է Տրդատին, որը մեկնում է Բաբելոն, քրիստոնյա դարձնում հեթա-

նստներին, գրավում է երկիրը: Գրիգորն ու Տրդատը ժողովրդին քրիստոնյա են դարձնում սրով: «Սակայն նրանք (հայերը— Գ. Ա.) այսօր իրենց ամբողջ թագավորությունը կորցրել են և մարտունակ մարդիկ են: Շատ վաղուց չէ, որ նրանք կորցրել են իրենց թագավորությունը և մի մայրաքաղաք Սիս անվամբ, որը գրավել է սուլթանը: Այնտեղ նստում է նաև նրանց պատրիարքը, որը, սակայն, մեծ հարկ է վճարում սուլթանին: Կիպրոսի թագավորն իր արքունիքում ունի շատ զորք Հայաստանից...»:

64-րդ գլուխը կոչվում է «Սուրբ Գրիգորի մասին»: Նկարագրվում է Գրիգոր Լուսավորչի և Տրդատի ճանապարհորդությունը Հոռոմ: Ճանապարհին անցել են Բաբելոնով, Պարսկաստանով, Մեծ Հայքով, Երկաթյա դռներով (Դերբենդ), Ռուվլեայով (Ռոսիա), Վալախիայով, Բուլղարիայով, Հունգարիայով, Ֆրանսիայով, Լոմբարդիայով, Դուշկանով (Տոսկանա): Գրիգոր Լուսավորչին Իտալիայում հրաշքներ է գործում, բուժում է կույրերին: Հոռոմի Պապը մեծ շուքով է դիմավորում նրան: Հայոց հոգևոր հովիվը Հոռոմի պապից խնդրում է անկախություն հայաստանցի հավատացյալների համար: Պապը շնորհում է: Հայերն «իրենց պատրիարքին կոչում են կաթագնես (կաթողիկոս), իսկ թագավորին՝ թակխաուեր (թագավոր)»:

Ինչպես այս, այնպես էլ հաջորդ՝ 65-րդ գլխում Շիլտբերգերը պատմում է այնպիսի բաներ, որոնք նրան հայտնի պետք է լինեին Ագաթանգեղոսի երկին ուշ ժամանակներում կցված «Դաշանց թղթից»:

65-րդ գլխի խորագիրն է. «Վիշապի և միեղջերուի մասին»⁴: Պատմվում է «Դաշանց թղթից» հայտնի առասպելն այն մասին, թե ինչպես ուժեղ Տրդատը հաղթում է վիշապին ու միեղջերուին, որի միայն գլուխը հագիվ էր տեղավորվում սայլի վրա: Տանում են Հոռոմ: Պապը երախտագիտությունամբ է ընդունում սխրանքը և, ի նշան շնորհակալության, բավարարում է Գրիգոր Լուսավորչի պահանջը: Այնուհետև Շիլտբերգերը նկարագրում է հայ եկեղեցու ծեսերը, հաղորդման ժամանակ բաժանվող ճաշակ պատրաստելու եղանակը (անեկ խմորից), սաղմոսերգությունը: Ճաշակի համար նախատեսված խմորից հաց պատրաստելը միղք է համարվում: Ճաշակին խառնում են գինի և ջուր: «Նրանք նաև Ավետարան են կարդում, այգաբացից առաջ, և այն քահանան, որը վարելու է ծեսը, նա այդ օրվան նախորդող կեսգիշերից հետո չպետք է քնի, և երբ նա ծեսը կատարելու է, պետք է կնոջ մոտ քնի դրանից երեք օր առաջ և մեկ օր հետո (չորս օր պետք է ժուժկալ մնա— Գ. Ա.)... Եվ եթե որևէ մեկը մյուսի հանդեպ ատելություն կամ թշնամանք ունի, նա պարտավոր է եկեղեցու առջև կանգնել: Նրան ներս չեն թողնում մինչև չհաշտվի: Հայր մերը երգում են նաև կանայք ու տղամարդիկ... նրանք փոքրիկ երեխաներին էլ են ճաշակ բաժանում: Քահանան իր մագերն ու մորուսը չի խուզում... եթե քահանա է (մեռոն տնօրինողը— Գ. Ա.), պետք է քառասուն օր ու գիշեր մնա եկեղեցում: Եվ երբ քառասուն օրն անցնում է, նա կատարում է իր առաջին ծեսը, որից հետո նրան եկեղեցուց դուրս են հանում երգելով... Ապա զալիս են նրա տանտիկինն ու երեխաները... Ապա զալիս են քահանայի և տանտիկնոջ բարեկամները և բերում են մատաղ... Ապա այնտեղ մեծ ուրախություն ու հարսանիք է լինում... Բայց նրանց (հարսին ու փեսային— Գ. Ա.) իրար մոտ չեն պառկեցնում քառասուն օր... Երեխան կնքելիս գրկում է միայն տղամարդը և ոչ՝ կինը: Եվ ասում են, թե մեր Տերն էլ (Քրիստոսը— Գ. Ա.) նույնն էր, գի նրան կնքել է մի տղամարդ և ոչ՝ կին»: Նրանք կնունքը մեծ պատիվ են համարում... նրանք շատ բան են անում մեր հավատի համաձայն: Նրանք հաճույքով են հաճախում նաև մեր եկեղեցի ծխակատարու-

⁴ Նույն տեղում, էջ 148—154:

թյան: Հույներն այդ շին անում: Հայերն ասում են, որ իրենց և մեր հավատ-
ների միջև սոսկ շինն տարբերություն կա, բայց իրենց ու հույների հավատ-
ների միջև կա մեծ անջրպեա... նրանք տոնում են նաև Սուրբ խաչը («սուրբ-
խեչ» — Գ. Ա.), որը սեպտեմբերին է... նրանք տոնում են մի սրբի, որը աս-
պետ է եղել: Նա կոչում է Յելիխիս (Սարգիս — Գ. Ա.)... երբ ամուսիններից
մեկը մյուսին շի կամենում, իրարից անջատում են նրանց մահճակալն ու
սեղանը, իսկ երբ երկուսն էլ միմյանց շին ուզում, այդ դեպքում նրանց առ-
հասարակ բաժանում են... եթե երեխա ունեն՝ տալիս են հորը: Նրանց բոլոր
եկեղեցիներն ազատ են, այնպես որ ոչ ոք չի կարող ո՛չ վաճառել, ո՛չ կտա-
կել: Եթե որևէ քահանա կամենա կառուցել սեփական եկեղեցի, ապա պետք
է այն տրամադրի համայնքին, որպեսզի իր մահից հետո ոչ ոք պահանջ չա-
ռաջադրի... Երբ մահանում են երիտասարդ տղան կամ աղջիկը, մետաքսյա
կամ թավշյա շորերով և ոսկյա օղերն ականջին ու մատներին են թաղում
երիտասարդներին, որոնք դեռևս ամուսիններ չէին եղել: Եվ երբ մի երիտա-
սարդ առնում է մի աղջիկ, որը պետք է կույս լինի և տեսնում է, որ կույս
չէ, ետ է ուղարկում հոր տունը... նրանք իրենց եկեղեցիներում տնկում են
միայն մեկ խաչ և ոչ ավելին... նրանք իրենց խորաններին պատկերներ շին
նկարում (հավատում են կենդանի Աստծուն — Գ. Ա.)... ձեռքը դնում է (քա-
հանան — Գ. Ա.) նրանց գլուխներին և ասում. «Աստված թողու թու միխիք»:
Սա նշանակում է «Աստված թողնի քո մեղքը»... ժողովուրդը ծունր է դնում,
բարձրացնում է ձեռքերն առ Աստված և արտասանում՝ «օգորնիքա» («ողոր-
մեա» — Գ. Ա.)... նրանք դեսուզեն շին բամբասում և իրենց եկեղեցում էլ շին
խոսում... նրանք իրենց եկեղեցին զարդարում են շատ գեղեցիկ և ունեն ծի-
սական լավ հագուստ, մետաքսյա և թավշյա կտորներից, երփներանգ: Չկա
մի հավատացյալ, որ Ավետարան չկարդա, ինչպես որ անում են մեր գրագետ
հավատացյալները: Երբ նրանք (հայերը — Գ. Ա.) մի գիրք են տեսնում, կար-
դում են, տեսնելու համար, թե ի՞նչ կա գրքում: ... նրանց քարոզիչը պետք է
հմուտ լինի Սուրբ գրոց մեջ և պետք է իրենց պատրիարքից իրավունք ստա-
նա քարոզելու... Եվ այդ քարոզիչին կոչում են վարթաբեհտ (վարդապետ —
Գ. Ա.)... Եվ երբ մի քահանա կամ եպիսկոպոս անօրինություն է անում, նը-
րան տուգանում են»:

Հայերին նվիրված վերջին գլխի վերնագիրն է, «Հույներն ինչը՞ են հա-
յերին թշնամի»: Շիլտբերգերը պատմում է հայերից իր լսած հետևյալ զը-
բույցը: Թուրքերը 40.000 զորքով հարձակվում են հույների վրա, երկիրը քա-
րուքանդ անում: Հունաց կայսրը լուր է տալիս հայոց թագավորին և խնդրում
օգնություն ուղարկել Հայաստանի քառասուն ամենալավ ասպետների: Սրանք
գալիս են կայսեր մոտ և ճակատամարտում են թուրքերի հետ: Հազարից ա-
վելի թուրք են սպանում, մյուսներին գերի վերցնում: Ապա կայսրից խնդրում
են վերադառնալ իրենց թագավորի մոտ: Կայսրը հորդորում է երեք օր էլ մը-
նալ, որպեսզի պատվի նրանց: Մի քանի ասպետի մեկական երիտասարդ կին
է հատկացնում, որպեսզի հայ քաջերից սերունդ ստանան: Այնուհետև որո-
շում է սպանել ասպետներին, որպեսզի նրանցից ազատվելով, իրեն ենթար-
կի հայոց թագավորին: Բոլորին սպանում է, բացի մեկից, որը գտնվելիս է
եղել իրեն հատկացված կնոջ մոտ: Սա վերադառնում է Հայաստան և հայտ-
նում եղելությունը: Հայոց թագավորը զայրանում է և դաշնակից վերցնելով
Բաբելոնի խալիֆին, հարձակվում է հունաց վրա: Պատերազմում են, հաղ-
թում: Կայսրը փախչում է Կոստանդնուպոլիս: Հայոց թագավորը 40.000 գերի
է բերում Հունաստանի մայրաքաղաքից և 40 ժամում բոլորին կոտորում:
Ողջ մնացած գերիներն այնքան շատ են լինում, որ նրանց վաճառում են երե-
սուն հույներ մեկ սոխի արժողությամբ:

Այս ամենը պատմելուց հետո Շիլտբերգերն ավելացնում է. «Հայերը հավատարիմ մարդիկ են, ինչպես քրիստոնյաների, այնպես էլ հեթանոսների միջավայրում ապրելիս: Նրանք խելացի են նաև աշխատանքում: Բոլոր այն ճարտար աշխատանքները, որ կատարում են հեթանոսները,— ոսկյա, ծիրանի, մետաքսյա, թավշյա, կտորեղեն պատրաստելիս,— շատ լավ և անթերի կատարում են նաև հայերը»:

Г. В. АБГАРЯН—Армяне в путевых заметках Шильтбергера.— В 1475 г первая немецкая типография Аугсбурга избрала для печатания книгу путевых записей Иоганна Шильтбергера, сделанных им во время 33-летних (1394—1427 гг.) странствий по странам Европы, Азии и Африки. В части, касающейся Армении, путешественник излагает интересные сведения об истории и жизни армян.

В конце записей помещена молитва «Отче наш» на древнеармянском латинскими буквами. Это первый печатный орбазец грабара. Существуют переводы этих путевых заметок на разные языки. Русский перевод проф. Бруна (Одесса, 1867 г.) был переиздан в 1984 г. в Баку с сокращениями мест, невыгодных для азербайджанской «науки», в частности, о населенном армянами Карабахе.

Մատենադարանում կա շուրջ 150 տարի առաջ հրատարակված Ուղեգրութիւնից ընդամենը մեկ օրինակ: Անհրաժեշտ է վերահրատարակել այն, ինչպես նաև ձեռնարկել հայերեն լիակատար թարգմանութեանը: